

ողեւորուած ուսմանահայ աշակերտներ զըրկրէր էին արտասահմանի հայ կրթարանները՝ ինչպէս Փարիզի Մուրատեան վարժարանը, Թէոտոսիոյ Խալիպեան դպրոցը, Երուսաղէմի Ժատանդաւորացը, եւ այլն: Այս աշակերտներն էին որ՝ իրենց դարձին՝ պահ մը երկարեր էին հոգեւարքը, որ օր մը պիտի իր վախճանին հասնէր, աւա՛ղ:

ՊՕԹՕՇԱՆԻ ՄԷՁ

ԺԹ. դարու սկիզբէն իսկ Պօթօջան իր հայ դպրոցը ունէր: Այդ շրջանին, կ'ըսէ Գր. Կոյլավ, հայ դպրոցը միակ դպրոցն էր ամբողջ քաղաքին մէջ, վոյվօսներու կողմէ վաւերացուած առանձնաշնորհումներով: Հայ լեզուն կը խօսուէր ուրիշ ժողովուրդներէ ալ, ուսմէն թէ հրէայ:

1839-ին կը ձեռնարկուի նոր դպրոցի մը շինութեան: Լուսիկ եւ Ստեփան Կոյլաւեան եղբայրներէ, Սաչիկ Ազոնձէ, Գրիգոր Մետաքսեանէ, Յակոբ Շահրնեանէ եւ Աստուածատուր Ապրոյեանէ բաղկացեալ մասնախումբ մը կը դիմէ հանդանակութեան տեղւոյն 300-350 տուն հայութեան մէջ: Դրամը անբաւական կուգայ, եւ Գրիգոր Մետաքսեան իր քսակէն կը հոգայ շինութեան ծախքերուն գրեթէ կէսը:

1841-ին Գասպար Կոյլաւեանի կը յանձնուի դպրոցին վերատեսչութիւնը: Իր օրով դեպքոցը կ'ունենայ շատ փայլուն վիճակ մը: Հոն կը յաճախէին 140-160 հայ աշակերտներ: 1843-ին հանգանակութեան մը կը ձեռնարկուի դպրոցը եկամուտով օժտելու համար, եւ կը գոյանայ 1000 աւստրիական ոսկի, որ հետըզհետէ աճելով կը հասնի մինչեւ 100,000 ոսկի լէվի:

Ազգ. դպրոցին ուսուցիչն էր Գաբրիէլ վարժապետ Գէորգեան: Բնիկ պօթօջանցի էր աս, յայտնի ծնողքի դաւակ: 1826-ին երբ Երուսաղէմի նուիրակ պօթօջանցի Մարկոս վարդ. Պօթօջան կ'այցելէ՝ կը տեսնէ Գաբրիէլի ուշիմութիւնը, եւ պատճառ կ'ըլլայ որ ան իրեն ընկերանայ դէպի Երուսաղէմ, ուր ան կ'ուսանի երեք տարի. յետոյ երեք տարի ալ ուսանելով Պոլիս, մանաւանդ Ֆրանսերէն եւ իտալերէն լեզուները, դիւանադպիր կ'ըլլայ պատ-

րիարքարանի, մինչեւ 1835: Նոյն տարին Պօթօջան դառնալով երեք տարի կը պաշտօնավարէ դպրոցին մէջ, վարժարանին շինութեան ստեն իր պաշտօնը ընդհատելով քանի մը տարի: 1843-ին դարձեալ կ'անցնի պաշտօնի՝ դր կը վարէ մինչեւ 1851: 1852-1854 ան ուսուցչութիւն կ'ընէ Ֆօքչանի հայ դպրոցը, եւ կը մեանի այդ պաշտօնին վրայ, հազիւ 44 տարու, ձգելով արդիւնալից կրթական մշակի մը անունը: Գաբրիէլ վարժապետ որ կը ստորագրէր «Գաբրիէլ Սաղիմեան դպիր պոթօջանցոյ» հասցուցած է բազմաթիւ աշակերտներ, որոնցմէ յիշենք Պետրոս քահ. Յակոբեան՝ որ յաջորդած է իրեն եւ պաշտօնավարած երկար տարիներ, Պօթօջանի Ստեփան քահ. Միշահեանը, եւ Նիկողայոս Զէննէեան որ 40 տարի ուսուցչի պաշտօն վարած է դպրոցին մէջ, մինչեւ 1890, երբ փակուեցաւ մանչոց դպրոցը:

Պօթօջան ունեցած է նաեւ իր աղջկանց դպրոցը, որ հազիւ երեսուն տարուան կեանք մը ունեցած է սակայն: Արդարեւ 1866-ին, բարեսիրական եւ մշակութային ընկերութիւն մը, որ «Բարեգործական Ընկերութիւն» կը կոչուէր եւ որուն վարչութեան մէջ կային Օ. Պրայլիանու, Մ. Միշու, Սիմիոն Բափրի, Յար. Կոյլավ, Մ. Պարոնչա, Ս. Փօփօլիչ եւ Կ. Մխիթր, բացաւ աղջկանց դպրոց մը: Այս դպրոցն ալ, որ առաւելապէս հիմնուած էր մայրենի լեզուին ուսուցման համար, փակուեցաւ՝ ընկերութիւնը լուծուած ըլլալով 1896-ին:

Իր դպրոցներուն հետ Պօթօջան կը կորսորցնէ տակաւ իր մայրենի լեզուն ալ, որուն համար այնքան բժախնդիր էր եղած երբեմն: Զեռքս անցաւ պատուէրներու ցանկ մը Պօթօջանի հայ քահանաներուն համար, — չո՛րս հատ թիւով՝ այցելու վարդապետէն զատ, — 1827 Մարտ 20-ին գրուած: Սապէս է խմբագրուած վեցերորդ պատուիրանը. —

«Մի լիցի երբեք խօսիլ ընդ իրեարս եւ ընդ ժողովուրդս յօտար լեզու, զնոյն պատուէր տացին նաեւ ժողովրդոց իւրեանց, զի եւ նոքա հայերէն խօսեցին, որպէսզի անկորուստ մընասցէ հայրենի լեզու մեր»:

Թող մէյ մը հի՛մա դերեզմանէն ելլէ այս